ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 137-Ա
վարչական տուգանք նշանակելու մասին

21 օգոստոսի 2020թ. քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավար Գեորգի Ավետիսյանս, քննելով անհատ ձեռնարկատեր Մանուկ Կիրակոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 7-ի N 96-Ա հրամանի համաձայն անհատ ձեռնարկատեր Մանուկ Կիրակոսյանի իրականացված ստուգման արդյունքում պարզվել և 2020 թվականի մարտի 23-ի թիվ 96 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են Հայաստանի Հանրապետության Հայասատանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 1-ի N 34-Ն որոշման հավելվածի 55-րդ և 59-րդ կետերի պահանջները. այն է՝

- սննդի շղթայում ներգրավված անձնակազմը չի ենթարկվել պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության.

-չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ:

Այսպիսով հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է անհատ ձեռնարկատեր Մանուկ կիրակոսյանը (հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փ.,11/4շ, բն. 65): Մանուկ Կիրակոսյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է և չի մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 14-րդ, 32-րդ, 238²-րդ, 279-րդ, 281-րդ, 158-րդ հոդվածի 35-րդ մասով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Անհատ ձեռնարկատեր Մանուկ Կիրակոսյանի նկատմամբ՝

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 158-րդ հոդվածի 35-րդ մասով սահմանված իրավախախտման համար նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ.

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին և վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել Տեսչական մարմին:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

4. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի համաձայն՝ դրամական պահանջներն ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

Recoverable Signature

X

ԳԵՈՐԳԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Signed by: AVETISYAN GEORGI 2312770121

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կ.Տ.